# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**20 հոկտեմբերի 2021 թվականի N 438-Ա**

**ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով և 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 25-ի N 1079-Ն որոշումը՝

**որոշում եմ.**

1. Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Աշոտավան գյուղում գտնվող «Բռնակոթի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքը՝ 158.97 քառ. մետր մակերեսով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին հանձնելու նպատակով ստեղծել գույքի հանձնման հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

| | | |
|---|---|---|
| Արմեն Թադևոսյան | - | Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ) |
| Մարինե Աբգարյան | - | Սյունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ |
| Լյուդմիլա Հարությունյան | - | «Բռնակոթի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն |
| Արևհատ Սահակյան | - | «Բռնակոթի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվապահ: |

2. Հանձնաժողովին՝ մինչև 2021 թվականի նոյեմբերի 30-ն ապահովել նախատեսված գույքի հանձնման աշխատանքների իրականացումը և ներկայացնել տեղեկատվություն:

20.10.2021

X

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 20
ք. Կապան